ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ ՀԵՏ

# 25
# ՎԵՐՋԻՆ ԱՂՕԹՔ

*Նարեկացիին վերջին աղօթքներէն մէկուն ալ պիտի անդրադառնանք որպէս վերջաբան։ Նորութիւն չկայ։ Նարեկացին, հայ ժողովուրդի ապագայ մեծանուն սուրբը, որ իր «Մատեան»ը Աստուծոյ նուիրաբերած է որպէս «անարիւն զոհաբերութիւն», հիմա ալ նոյնը կը խնդրէ Տիրոջմէ։ Տէ՛ր, հանգստացուր զիս։*

Զուարթ քաղցրութեամբ նայէ երկինքէն
Յոգնաչարչարիս ամենակործան վտանգներուն,
Տէ՛ր,
Եւ ազատէ զիս այս հեծեծանքներէն դառնակսկիծ
Հանգստացուր, տուր անդորրութիւն։

*Պիտի հաւատանք, որ Նարեկացին իսկապէս պէտք ունէր այդ հանգստութեան ու անդորրութեան, պիտի հաւատանք, որ անկեղծ էին իր հեծեծանքները, իր մեղաւորութեան մասին իր տառապանքները։ Վստահ էր, որ պիտի արժանանար Աստուծոյ ներողամտութեան, բայց գիտէր նաեւ, որ Աստուծոյ ներողամտութեան արժանանալու միակ պայմանն էր զղջումն ու ապաշխարանքը, խոստովանութիւնն ու աղերսանքը։ Այդպէս էր, որ ան պիտի գտնէր այն հանգստութիւնն ու անդորրութիւնը, որուն այնքան պէտք ունէր գիշեր ցերեկ, արթուն կամ քունի մէջ։*

*«Մատեան Ողբերգութեան» հատորը անվերջանալի այդ աղօթքը կը բերէ մեզի գեղարուեստի ու բանաստեղծութեան ընդմէջէն։ Եւ այս հրաշալի գիրքին վերջին էջը կը բացուի Քրիստոսի ուղղեալ սա ճաճանչագեղ բառերով.*

Արեգա՛կ արդար, օրհնեա՛լ ճառագայթ,
Լոյսի կերպարանք, փափաք անձկալի,
Անքնին բարձրեա՛լ, անպատում զօրեղ,
Բարիի բերկրութիւն, յոյսի տեսութիւն,
Գովեալ երկնաւոր, թագաւոր փառքի,
Քրիստոս արարիչ, խոստովանուած կեանք,
Թերութիւններն ու վրիպումներն այս
Բազմամասիալ իմ ողբամատեանի
Ամենազօր քու խօսքով լրացուր
Զայն մատուցէ որպէս հաճելի աղերս
Երկնաւոր քու հօր։

*Քրիստոս արդէն Նարեկացիի ու Աստուծոյ միջեւ կամուրջ մըն է, եւ հոս ալ Նարեկացին Քրիստոսէն նոյն միջնորդութիւնը կը խնդրէ, այս անգամ Մատեանին համար։ Նարեկացին այլեւս աւարտած է Մատեանը, հարիւրաւոր անգամներ փառաբանած է զԱստուած, այդ փառաբանումին մէջ գտած է իր անդորրութիւնն ու հոգիի հանդարտութիւնը։ Կը զգայ նաեւ, որ մօտեցած է իր կեանքի վախճանին։ Անպայման գիտէ, որ իր կեանքի օրերը այնքան դատարկ ու փուճ չեն եղած, որքան ինք իր գիրքին մէջ պնդած է քանիցս։ Տառապած, բայց երջանիկ մարդ է, որ կը զգայ, թէ պիտի անմահանայ իր գիրքով, եւ որ չի գիտեր սակայն, թէ սուրբ մը պիտի նկատուի իր ժողովուրդին կողմէ։ Այնուհանդերձ իր վերջին խնդրանքն է Աստուծմէ. Աստուծոյ ողորմութիւնը թող ոռոգէ չոր ու պապակ անդաստանները, նաեւ՝ իր գօս ոսկորները, որոնք պիտի թաղուին անոնց մէջ։ «Մատեան Ողբերգութեան»ը կ՚աւարտի Քրիստոսի ուղղեալ սա վերջին աղօթքով.*

Կենանարիդ սրբազան արեան բաժակն երկնաւոր
Որ միշտ անսպառ կը պատարագուի,
Որպէս յիշատակ ննջեցեալներու
Հոգիներու փրկութեան ու կենդանութեան,
Թող ծաղկեցնէ ու պտղաբեր դարձնէ
Դաշտն իմ մարմնեղէն,
Որպէսզի անոր մեղքերով ի սպառ մահացած
հոգիս
Քու շնորհներով, քու մէջ զօրացած,
Նորոգուի քեզմով,
Եւ ես, փրկուած մեղքերէս՝
անմահ կենդանութեամբ մը
Յարութեան ժամուն արդարներու հետ
Արժանի դառնամ հօրդ օրհնութեան,
Որու հետ քեզ փա՛ռք, իսկ քու Սուրբ Հոգիին
Բարեբանութի՛ւն՝ անլուռ գոհութեամբ
Այժմ, հանապազ եւ յաւիտեանս յաւիտենից,
Ամէն։

*Նարեկացին գիտէր անշուշտ, որ ամէն ինչ պիտի պատահէր այնպէս, ինչպէս ինք կը ցանկար վերի աղօթքին մէջ։ Զուր տեղ չէ, որ Սուրբ Գրիգոր Նարեկացին հազար տարիէ ի վեր կ՚ապրի իր ժողովուրդին սրտին ու գլխուն մէջ։ Աստուած իր որդւոյն Քրիստոսի բարեխօսութեան պէտք չունէր արդարութիւն ընելու համար իր այս խոնարհ ու «մեղաւոր» զաւկին, Նարեկացի Գրիգորին, որուն աղօթքներն ամէն գիշեր արդէն կը բարձրանային Նարեկայ վանքի ցուրտ պատուհաններէն դէպի երկինք։ Պիտի ըսենք, որ այդ աղօթքները այսօր ալ կը բարձրանան ի գոհութիւն Աստուծոյ։ Կը բարձրանան հազարումէկ շրթներէ, աշխարհի այս անկիւններէն մինչեւ աշխարհի ամէնէն հեռաւոր ափերը, հո՛ն, ուր հայ մարդիկ ի վիճակի են Նարեկ մը ձեռք առնելու ու կարդալու, հայ մարդիկ, որոնք փոխ կ՚առնեն Նարեկացիին բառերն ու զգացումները եւ անոնցմով կը յայտնեն ո՛չ միայն իրենց զղջումներն ու աղաչանքները, այլ նաեւ կը փառաբանեն զԱստուած, որովհետեւ Նարեկացիին համար աղօթել՝ կը նշանակէր զԱստուած փառաբանել։*

*Յաւերժական լո՛յս եւ խունկ՝ Ս. Գրիգոր Նարեկացիի յիշատակին։*

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ

(Վերջ)

# ՄԻԱՑԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ

*(ԱՆԹԻԼԻԱՍ-ԼԻԲԱՆԱՆ 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003)*

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։
Քրիստոնէական ջերմ սիրով ողջոյն բոլորիդ։

Մենք, Շնուտա Գ.՝ պատրիարք Աղեքսանդրիոյ եւ Ս. Մարկոսի աթոռին, Իգնատիոս Զագգա Ա.՝ պատրիարք Անտիոքի եւ համայն Արեւելքի, եւ Արամ Ա.՝ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, գոհունակութիւն կը յայտնենք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որ մեզի անգամ մը եւս կարելիութիւնը շնորհեց միասին աղօթելու եւ միասնաբար քննարկելու մեր հասարակաց մտահոգութիւնները՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մայրավանքին մէջ, Անթիլիաս-Լիբանան։ Իբրեւ հոգեւոր պետեր այս վեցերորդ անգամն է, որ կը համախմբուինք 1998էն ի վեր տեղի ունեցող տարեկան հանդիպումներու ճամբով՝ մեր հաստատած միջեկեղեցական գործակցութեան կառոյցի շրջագիծին մէջ։

Մեր այս հանդիպումին ընթացքին, մենք վերահաստատեցինք մեր հաւատքի միութիւնը, որ դարեր շարունակ հիմնաքարը հանդիսացած է մեր դաւանական կեցուածքներուն եւ աստուածաբանական ուսուցումներուն։ Աստուածաշունչին, առաքելական հաւատքին, երեք տիեզերական ժողովներուն եւ մեր հայրերուն ուսուցումներուն վրայ խարսխուած մեր այս միութիւնը Արեւելեան Ուղղափառ (ոչ-քաղկեդոնական) եկեղեցիներու ընտանիքին կեանքին եւ վկայութեան յենարանը եղած է եւ դարձած կենդանի աղբիւր հոգեւոր կենսունակութեան եւ առաքելութեան՝ մեր եկեղեցիներու պատմութեան բոլոր վերիվայրումներուն ընթացքին։ Արեւելեան ուղղափառ եկեղեցիներուն համար հաւատքի միութիւնը հիմնաքարն է հաղորդութեան, ինչպէս նաեւ՝ շօշափելի արտայայտութիւնը եկեղեցւոյ միութեան։

Եկեղեցւոյ միութիւնը աստուածային պարգեւ մըն է. զայն պէտք է պահպանել եւ խորացնել։ Ան միաժամանակ լուրջ պատասխանատուութեան հրաւիրող կոչ մըն է։ Հետեւաբար, մեր հաւատքի միութիւնը պէտք է գործնականօրէն արտայայտութիւն գտնէ մեր ժողովուրդներու հաւաքական կեանքին եւ վկայութեան մէջ՝ մեր մշակած միացեալ ծրագիրներուն ճամբով, յատկապէս՝ կրօնական դաստիարակութեան, ընկերային ծառայութեան եւ աստուածաբանական կազմաւորման մարզերուն մէջ։

Մեր հաւատքի միութիւնը պէտք է նաեւ բաժնենք Միջին Արեւելքի թէ աշխարհի տարածքին գտնուող այլ եկեղեցիներու։ Արդարեւ, եկեղեցւոյ միութիւնը քրիստոնեաներուն հասարակաց նպատակակէտն է։ Մեր եկեղեցիները այս ոգիով եւ յանձնառութեամբ գործօն մասնակցութիւն կը բերեն աստուածաբանական երկխօսութիւններուն եւ զանազան եկեղեցիներու ու միջազգային եւ շրջանային միջեկեղեցական խորհուրդներու աշխատանքներուն։ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը մեր եկեղեցիներուն համար միջեկեղեցական գործակցութեան կարեւոր կազմակերպութիւններ են։ Մենք պիտի շարունակենք մեր ամբողջական աջակցութիւնը ընծայել անոնց գործունէութեան եւ ծրագիրներուն։

Միջեկեղեցական համագործակցութեան կողքին միջկրօնական յարաբերութիւններն ու երկխօսութիւնները եւս հրամայական կը նկատենք։ Միջին Արեւելքի պատմութեան, քաղաքակրթութիւններուն եւ մշակոյթներուն անբաժանելի մասնիկը ըլլալով, մեր եկեղեցիները շարունակական երկխօսութեան մէջ եղած են իսլամութեան հետ։ Կեանքի այս երկխօսութիւնը, որ հիմնուած է փոխադարձ հասկացողութեան, վստահութեան եւ յարգանքի վրայ, պէտք է շարունակուի վերանորոգ թափով եւ պէտք է թափանցէ մեր ժողովուրդներու կեանքին մէջ։

Ղպտի, Ասորի եւ Հայ Ուղղափառ եկեղեցիները յատկանշական դերակատարութիւն ունեցած են այն բոլոր նախաձեռնութիւններուն մէջ, որոնք Միջին Արեւելքի մէջ արդարութեան, խաղաղութեան եւ բարգաւաճման նպաստած են։ Այսօր եւս, չենք կրնար անտարբեր մնալ Միջին Արեւելքի մէջ տիրող կացութեան դիմաց։

Խորապէս կը հաւատանք, թէ խաղաղութեան գործընթացը պէտք է վերաշխուժանայ եւ պաղեստինցի ժողովուրդը տիրանայ իր անկախ հայրենիքին՝ մարդկային իրաւունքներու ամբողջական յարգումով։ Իսրայէլ պարտաւոր է յարգելու ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի այն բոլոր որոշումները, որոնք կը ճշդեն իր հեռացումը բոլոր արաբական եւ պաղեստինեան գրաւեալ հողատարածքներէն, ներառեալ Շապաայի ագարակները հարաւային Լիբանանի մէջ, Կոլանը եւ Երուսաղէմը։ Միայն արդարութեան հաստատումով կ՚ապահովուի ամբողջական եւ մնայուն խաղաղութիւն Միջին Արեւելքի մէջ։ Խաղաղութեան գործընթացին ծիրին մէջ Երուսաղէմը կը մնայ առաջնակարգ մտահոգութիւն մը։ Ան պէտք է դառնայ բոլոր կրօններու համակեցութեան քաղաքը՝ իւրաքանչիւրին վերապահուած իրաւունքներուն եւ պարտաւորութիւններուն յարգումով։

Իրաք պէտք է վերատիրանայ իր ամբողջական անկախութեան եւ գերիշխանութեան։ Բոլոր օտար ուժերը պէտք է անմիջականօրէն հեռանան Իրաքէն եւ հայրենաշինութեան գործընթացը պէտք է սկսի Իրաքի բոլոր համայնքներուն գործօն մասնակցութեամբ։

Մեր շրջանը կը գտնուի իր պատմութեան ամէնէն ճակատագրական հանգրուանին։ Պէտք է ըլլանք արթուն եւ զգաստ ու պատասխանատուութեամբ մեր կարելին ի գործ դնենք դիմագրաւելու Միջին Արեւելքի հարցերն ու մտահոգութիւնները։ Կը դատապարտենք ամէն տեսակի ազդարարութիւնները արաբական երկիրներուն եւ յատկապէս Լիբանանի ու Սուրիոյ վրայ կատարուած յարձակումները։

Կը դատապարտենք նաեւ ամէն տեսակի վայրագութիւն մեր շրջանին մէջ, ինչպէս նաեւ ամբողջ աշխարհի մէջ։ Կրօնը, ճշմարիտ իմացումով, սիրոյ, համերաշխութեան, խաղաղութեան եւ արդարութեան ջատագովն է։ Կոչ կ՚ուղղենք բոլոր անոնց, որոնք զանազան պատճառներով հակամարտութիւններու մէջ կը գտնուին, իրենց հարցերը երկխօսութեամբ եւ փոխադարձ հասկացողութեամբ լուծելու։

Ջերմօրէն կ՚ողջունենք Լիբանանի Հանրապետութեան նախագահ նորին վսեմութիւն զօր. Էմիլ Լահուտը, բոլոր համայնքներու հոգեւոր պետերը եւ Լիբանանի սիրեցեալ ժողովուրդը։ Փառք կու տանք Աստուծոյ, որ երկար տարիներու պատերազմէ եւ քանդումէ ետք, Լիբանան համերաշխութեան եւ վերաշինութեան հանգրուանը թեւակոխած է։ Իբրեւ հոգեւոր պետեր մեր ամբողջական աջակցութիւնը կը յայտնենք այս գործընթացին։ Քրիստոնեայ-Իսլամ գոյակցութիւնը, որ Լիբանանի իւրայատուկ ինքնութիւնը պէտք է ամրապնդէ, իբրեւ կեանքի երկխօսութեան տիպար օրինակ։

Մեր վեցերորդ հանդիպման աւարտին, Անթիլիասէն կոչ կ՚ուղղենք մեր եկեղեցիներու զաւակներուն՝ հաւատարիմ մնալու Աւետարանին, անոր պատուիրանները իրենց կեանքով թարգմանելով։ Եկեղեցին Աստուծոյ ժողովուրդն է. հետեւաբար, մեր զաւակները պէտք է մասնակցին իրենց եկեղեցիներու կեանքին եւ առաքելութեան։ Հոգեւոր պետերուս հանդիպումները եւ մեր եկեղեցիներուն միջեւ ծաւալող գործակցութիւնը վստահաբար պիտի սատարէ մեր եկեղեցիներու վերակենսունակացման, մասնաւորաբար դաստիարակչական, բարոյական, աստուածաբանական, ծառայական, աւետարանչական եւ միջեկեղեցական կալուածներուն մէջ։

Ընտանիքը նուիրական կառոյց մըն է մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի կողմէ հաստատուած։ Ընտանիքին նուիրականութիւնն ու ամբողջականութիւնը պէտք է պահպանուին։ Հետեւաբար, մենք կը դատապարտենք այն վարքագիծը եւ երեւոյթները ընտանիքին եւ սեռային յարաբերութեան առնչուած, որոնք խոտոր կը համեմատին Ս. Գրային սկզբունքներուն եւ բարոյական ուսուցումներուն։ Նկատի ունենալով ներկայ ընկերութեան կեանքին մէջ յառաջացող մօտեցումները եւ մարտահրաւէրները, որոնք կը վտանգեն քրիստոնէական բարոյական եւ հոգեւոր արժէքները եւ աւանդութիւնները, կոչ կ՚ուղղենք մեր ժողովուրդին անաղարտ պահելու իր քրիստոնէական ինքնութիւնը եւ ամուր՝ իր հաւատարմութիւնը Աստուածաշունչի ուսուցումներուն նկատմամբ։

Նաեւ, կոչ կ՚ուղղենք Սփիւռքի մեր համայնքներուն ամրօրէն կառչած մնալու իրենց մայր գաղութներուն եւ օժանդակելու Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան եւ արդարութեան վերահաստատման ճիգերուն եւ կրօններու ու ժողովուրդներու միջեւ փոխադարձ յարգանքի եւ հասկացողութեան իրագործման։

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաղաղութիւնը ձեր բոլորին հետ ըլլայ. ամէն։

ՇՆՈՒՏԱ Գ., ՊԱՏՐԻԱՐՔ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ
ՄԱՐ ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱԳԳԱ Ա. ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

# ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ

*Գիրք մը լոյս տեսած է, որուն անունն է «Գաղափարներու ընթացքը», «La Marche des Ide'es»։ Պիտի անդրադառնամ այս ուշագրաւ գիրքին, որ հականիշն է փտախտ դարձած դիւանակալութեան, գործնապաշտութեան, անսանձ փառասիրութիւններու եւ անհանդուրժողութիւններու։ Դար մը ամբողջ, աշխարհի մէջ գործուող անարդարութիւններու եւ չարութեանց դէմ ճակատ յարդարած մեծ մտաւորականի մտածումներէն մին կ՚արժէ խորհրդածութեան առարկայ դարձնել։ Խօսքը կը վերաբերի Ժան-Փօլ Սարթրի, որ Էմիլ Զոլայի բնազանցական (մեթաֆիզիք) քաջութիւնը չարունակեց, պատմական «Կ՚ամբաստանեմ»ի ուղիղ գիծին վրայ։ Խօսելով մտաւորականի մասին՝ կ՚ըսէ, որ ան կը զբաղի իրեն չվերաբերող հարցերով։ Թէ մտաւորականի քննադատութիւնը, առաջադրանքները, նախատեսութիւնները արդա՞ր կամ ճշմարի՞տ են, կ՚արդիւնաւորուի՞ն, թէ ոչ, ինք կը սխալի՞, թէ ոչ, բոլորովին երկրորդական է։ Պատմութիւնը ցոյց տուած է, որ մտաւորականը, երբ ուզած է մարգարէ ըլլալ, սխալած է։ Այս չի նշանակեր, որ ղեկավարական-դիւանակալական ճահճացումը եղած է յառաջդիմութեան ազդակ։ Մտաւորականը, իրեն չվերաբերող հարցերու վարագոյրը վերցնելով, խանգարելով, անհագստացնելով, հանդիսացած է ընկերութիւններու եւ գիտութեան զարգացման շարժիչ ուժը։ Ի մեծ դժբախտութիւն մեզի, խորհրդային մենատիրութեան եօթանասուն տարիներուն մտաւորականները կարգի հրաւիրուած են, քիչեր իրենց քիթը վերմակէն դուրս հանած են եւ՝ սուղ վճարած։ Սփիւռքը, իր կարգին, այլ պայմաններու մէջ եւ տարբեր պատճառներով Ժան-Փօլ Սարթրի սահմանած մտաւորական տիպարի ստեղծման ենթահող չէ եղած, քանի որ խրամատներու մէջ կամ պատնէշներու վրայ կողմնապաշտական կռիւները արգելք եղած են, վիճարկումը եղած է բանավէճ, ազգային եւ ընկերային ճառը դարձած է գովերգութիւն կամ լուտանք, մտաւորականները՝ վարժապետ կամ խմբագիր, կարգախօսները ջուր խառնուած ապուրի վերածելով եւ հրամցնելով։ Հակառակ ազատութիւններու մասին խօսուած ճառերու եւ մարդկային իրաւանց ջատագովման, շատ բան չէ փոխուած մեր կեանքին մէջ, ոչ ոք կը զարմանայ եւ կ՚ընդվզի, երբ Հայաստանի մէջ թերթի խմբագիր կը խոշտանգուի։*

*Ղեկավարի պարտականութիւնն է գործել, ի հարկին նախաձեռնել, մտաւորականին պարտականութիւնն է քննադատել, համայնքային, հայաստանեան եւ համահայկական մակարդակներու վրայ, առանց հաշուի ընելու, թէ այդ քննադատութիւնը կը վնասէ՞, կը խոչընդոտէ՞։ Այն պահուն, երբ մտաւորականը կը սկսի նման հաշիւներ ընել, կը դառնայ տիրացու կամ մունետիկ։ Այսօր ճահճացումը հասած է հոն, ուր հարցերը եւ կացութիւնները չենք պեղեր, իբրեւ հետեւանք՝ զանգուածները կ՚երթան եւ կը թաղուին իրենց առօրեայ մտմտուքներուն մէջ, որպէս սպառողական ընկերութեան ստեղծած մարդամեքենաներ։ Այսօր ո՞վ կը խօսի, թէ Մոսկուայի մէջ գումարուած Համահայկական Խորհրդաժողովը, որ վարչութիւն եւ նախագահ ընտրեց, ժողովուրդի կամքով արտայայտուած ո՞ր ներկայացուցչութեան ծնունդն է։ Այսօր ո՞վ կը խօսի, թէ ի՛նչպէս եւ ինչո՛ւ «Կիւլպէնկեան» Հիմնարկութեան կողմէ դպրոցի մը շինութեան յատկացուած չորս հարիւր հազար տոլարը կորսուեցաւ եւ համայնք մըն ալ զրկուեցաւ իր միջնակարգ վարժարանէն, ո՞վ հարց կու տայ, թէ ինչո՞ւ փակուեցաւ հարիւր յիսուն տարուան Մխիթարեան վարժարանը եւ ինչո՞ւ չի վերաբացուիր, ինչո՞ւ Ֆրանսայի կէս միլիոն հաշուող հայ համայնքը թատերասրահ մը չունի, ինչո՞ւ չեն քննադատուիր Քալիֆորնիոյ մէջ լոյս տեսնող եւ ամէն օր հայերէնը բութ դանակով մորթող թերթերը, ինչո՞ւ Սփիւռքի մէջ աղմուկ չբարձրացաւ (բացի լրատուութենէն), երբ Թուրքիոյ հայոց հայկական սրբատեղիներ ուխտագնացութիւնը խափանուեցաւ, ինչո՞ւ հնարաւորութիւն չենք ընծայեր հետախուզութեան լրագրութեան, որպէսզի իմանանք, թէ ի՞նչպէս Հայաստանի այս կամ այն նախկին կամ նոր ղեկավարը միլիոնաւոր տոլարներու հարստութիւն կը դիզէ, եւ այլն։ Ինչո՞ւ այսօր չի խօսուիր Հայաստանի մէջ տեղի ունեցած վայրագ սեփականաշնորհումներու մասին, որոնք աւելի կը նմանէին կողոպուտի։ Ինչո՞ւ հարազատ մտաւորականութիւնը դադրած է խաչելէ հայերէնի աղճատման մեծ ու պզտիկ դերակատարները, առանց մարդ չխրտչեցնելու կամ վարչականներու գործերը չխանգարելու փերեզակային հաշիւներուն։*

*Գիտութեան, պատմութեան, արուեստի, գրականութեան մասնագէտի կողքին, իրեն չվերաբերող գործերով զբաղողներու ընտրանի չունինք, ուստի կը զարգանայ ճահիճը, մենք ալ կը վարժուինք, կը վարժուինք նաեւ այդ ճահիճին քար չնետելու։*

*Ի դէպ, մեկենաս մը չկայ, որ յատկացում մը ընէ Վոլթէրի «Քանտիտ»ը աշխարհի բոլոր լեզուներով հայերուն ձրի բաժնելու, նաեւ թարգմանելու եւ հրատարակելու, որպէսզի ըսենք-չըսենք, թէ կը յառաջդիմենք եւ կ՚ապրինք աշխարհներու լաւագոյնին մէջ։*

Յ. ՊԱԼԵԱՆ

«ԱԶԴԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 5:00։

ՄԱՀԱԶԴՆԵՐԸ բացառութիւն են։ Մահազդ կ՚ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ։

*Հակառակ Գիտական Կարծիքին*

# ՀՐԱՇՔԻ ՀԱՄԱԶՕՐ ՔԱՅԼԵՐ

**ԲՐԻՏԱՆԱՀԱՅ ՄԸ ԿԸ ԴԱՐՄԱՆԷ ՅՄԱՀ ԱՆԴԱՄԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ ՀԻՒԱՆԴ ՄԸ, ՄԻՆՉ ԸՆԹԱՑԻԿ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԵՐԺԷ ԸՆԴՈՒՆԻԼ ԱՆՈՐ ԿԻՐԱՐԿԱԾ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ: ԲՐԻՏԱՆԱԿԱՆ «ՏԷՅԼԻ ՄԷՅԼ», «ՏԻ ԻՎՆԻՆԿ ՍԹԵՆՏԸՐՏ», «ՍԱՈՒԹ ՏԻՎԸՆ ՀԵՐԸԼՏ ԷՔՍՓՐԷՍ» ԵՒ «ՏԸ ՍԱՆՏԷՅ ԹԵԼԵԿՐԱՖ» ԹԵՐԹԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ.**

Երբ Կեմմա Քուին 7 տարեկանին անդամալուծուեցաւ ինքնաշարժի արկածի պատճառով, բժիշկները անոր ընտանիքին ըսին, թէ ան այլեւս երբեք պիտի չկարենար քալել: Անոնք նոյնիսկ կասկած յայտնած էին, թէ ան պիտի կարենար շնչել առանց օգնութեան կամ որեւէ շարժում կատարել վիզէն վար: Սակայն Կեմմա մերժեց ընկրկիլ եւ այնպիսի քաջութիւն ցուցաբերեց, որ նոյնիսկ ուժ ներշնչեց անդամալուծութեան դատապարտուած «Սուփըրմէն»ի հերոս Քրիսթաֆըր Ռիվի:

Կեմմա 18 տարեկանին իր առաջին քայլերը առած է: 8 ամիս մտային աննախընթաց դարմանումի հետեւելէ ետք, ան այժմ կրնայ քալել քանի մը մեթր, ֆութպոլի գնդակ մը հարուածել եւ մարզանքի յատուկ հեծիկ մը քշել:

«Ինծի ըսուած էր, թէ անուաւոր աթոռէս երբեք պիտի չբաժնուէի: Սակայն որոշած եմ կատարելապէս բուժուիլ,- կ'ըսէ ան:- Միշտ հաւատացած եմ, թէ օր մը ամէն ինչ պիտի բարեփոխուի: Այժմ կը զգամ, թէ կրնամ ընել, ինչ որ ուզեմ: Ապագայ ունիմ եւ անհամբեր եմ»:

Կալէսի մէջ փոխադրակառք մը 1992ի Յունիսին զարնուած էր այն ինքնաշարժին, զոր կը քշէր Կեմմայի հայրը: Աղջնակին ողնայարը ծանրօրէն վնասուած էր, եւ բժիշկները ըսած էին, թէ ան երբեք պիտի չկարենար ապրիլ ազատ կեանք մը:

Սակայն Կեմմա որոշեց փաստել, թէ բժիշկները սխալ էին: Ան շուտով սորվեցաւ շնչել առանց գործիքի: Ան նաեւ սորվեցաւ գրամեքենայ մը գործածել «ծծելով եւ փչելով» անոր միացած խողովակ մը եւ վերադարձաւ դպրոց, ուր լաւ արդիւնքներ արձանագրեց քննութիւններու մէջ:

Իր ազատ ժամերուն Կեմմա քարոզարշաւ կատարած է ի նպաստ ողնայարի ուսումնասիրութեան կեդրոններու եւ աւելի քան 100 հազար փաունտ հաւաքած է: 1996ին ան իր յարատեւութեան համար արժանացաւ Քաջ Մանուկի մրցանակին: Նոյն տարին ան Քրիսթաֆըր Ռիվի նամակ մը գրելէ ետք ստացաւ պատասխան մը, որուն մէջ դերասանը կ'ըսէր, թէ նամակը օգնած էր իրեն «պայքարելով դուրս գալու իր յուսահատութեան խորերէն»:

Ապա անցեալ Նոյեմբերին Կեմմա անսպասելիօրէն որոշ չափով սկսաւ զգալ իր ոտքերը: Լսելէ ետք դարմանումի նոր միջոցի մը մասին, որ օգնած էր այլ հիւանդներու յաղթահարելու իրենց անդամալուծութիւնը, ան որոշեց փորձել:

Դարմանումը կը կիրարկէր ինքզինք «միտքի ուսուցիչ» հռչակած 54 տարեկան հայ մը՝ Հրաչ Օկալի, որ Ռեւոլուշըն Ինթըրնէշընըլ անունով սեփական դարմանատուն մը ունի Լոնտոնի կեդրոնական թաղամասերուն մէջ:

Հրաչ Օկալի՝ նախկին ոսկերիչ մը եւ հին խալիքներու վաճառական մը, որ երբեք բժշկագիտական ուսում չէ ստացած, կ'ըսէ, թէ պարզապէս հիւանդներուն հետ խօսելով եւ անոնց ուշադրութիւնը անշարժ մկաններու վրայ կեդրոնացնելով կրնայ օգնել անոնց վերագտնելու շարժելու կարողութիւնը:

«Կեմմային կը թելադրեմ գոցել աչքերը, երթալ ուղեղ, իջնել ողնայարէն վար, մինչեւ ջիղերուն ծայրամասերը, որոնք իրարու կապուած էին նախքան ողնայարին վնասուիլը, ապա թոյլ տալ, որ այդ ուժը հոսի եւ կեդրոնացեալ թափանցումով տարածուի մարմնին զանազան մասերուն մէջ, այնքան խոր, որքան կարելի է, մինչեւ որ զգայ զանոնք»:

Դարմանումի իւրաքանչիւր նիստ կը տեւէ մէկ ժամ եւ աժան չէ (80 փաունտ): Սակայն Կեմմա կը հաւատայ, թէ կ'արժէ կատարել այս ներդրումը: Ան Փետրուարէն ի վեր օրական երեք ժամ մտային վարժութեան կը հետեւի, առաւել մարզանքներ կը կիրարկէ ծանրութիւն բարձրացնելով եւ մարզանքի հեծիկ մը քշելով դարմանատան մէջ: Ան օրական յաւելեալ 5 ժամ նոյն մարզանքները կը կիրարկէ տան մէջ:

Անցեալ ամիս Կեմմա իր առաջին քայլերը նետեց իր հօր տարեդարձին առիթով, ցոյց տալու համար իր բարելաւումին ընթացքը: Այդ առիթով էր, որ ան մղուած էր առնելու իր առաջին քայլերը, որոնք արձանագրուեցան վիտէոյի վրայ:

«Ուզեցի յատուկ բան մը ընել հօրս համար, որովհետեւ շատ սերտօրէն կապուած ենք իրարու, եւ ան միշտ նեցուկ կանգնած է ինծի,- կ'ըսէ Կեմմա:- Վերջաւորութեան սենեակին մէջ ամէն ոք կ'արտասուէր, սակայն ես չլացի: Բնազդաբար քալեցի, նոյնիսկ չմտածեցի այդ մասին: Պարզապէս քալեցի»:

Թէեւ Կեմմա կը խոստովանի, թէ «ամբողջութեամբ սպառած» կը զգայ իր թափած ճիգերուն պատճառով, սակայն այդ զգացումը ուրախութիւն կը պատճառէ իրեն:

«Երբ առաջին քայլերս նետեցի, ինքզինքս հզօր չզգացի, այլ բնական», կ'ըսէ ան:

Բրիտանիոյ բժշկագիտական ընկերակցութիւնը պայման չի դներ, որ մէկը դարմանումի միջոցներ կիրարկէ միայն պաշտօնական վկայականներ ստանալէ ետք: Սակայն ընկերակցութեան համաձայն, գիտական օրէնքներով կարելի չէ պաշտպանել Օկալիի կիրարկած դարմանումի միջոցը: Անիկա նոյնիսկ կ'արհամարհէ Օկալիի դերը Կեմմայի վիճակին բարելաւումին մէջ: «Ոմանց վիճակը պարզապէս կը բարելաւուի ժամանակի ընթացքին,- կ'ըսէ բանբեր մը:- Ոչ մէկ միջոց կայ փաստելու, թէ անիկա կապ ունի դարմանումին հետ»:



«Ես կախարդ մը չեմ եւ պարզապէս մէկու մը հպելով չեմ բժշկեր զայն: Իմ կիրարկած միջոցներս կախեալ են հիւանդին կամքէն եւ ամիսներ շարունակ իմ ցուցմունքներուս հետեւելու պատրաստակամութենէն», կ'ըսէ Հրաչ Օկալի՝ նախկին հայ ոսկերիչ մը, որ դարձած է «միտքի ուսուցիչ»:

Բրիտանիոյ Ողնայարի ուսումնասիրութեան բարեսիրական հիմնարկէն Ճոն Քաւենա «Պի. Պի. Սի.»ի հետ հարցազրոյցի մը առիթով ըսած է, թէ կատարուածը կարելի չէ ողնայարի դարմանում կոչել: «Հաւանաբար անիկա պարզապէս կը քակէ հիւանդին մարմնին մէջ հանգուցուած պահեստի ուժերը, զորս ան չէր կրնար գործածել», կ'ըսէ ան:

Կեմմա ինքնին կը խոստովանի, թէ դարմանումի այս միջոցը նոյն արդիւնքը չի տար բոլորին պարագային: «Հարկ է կամք ունենալ եւ երբեք չընկրկիլ», կ'ըսէ ան, սակայն կը յուսայ, որ «նմանօրինակ հարցերէ տառապողներուն պիտի կարենայ ցոյց տալ, թէ ինչ կարելի է իրականացնել»:

Այլ հիւանդ մը՝ 28 տարեկան Քարոլայն Միք, որ չորս տարի առաջ ախտաճանաչուած էր ողնայարի հազուադէպ եւ անբուժելի հիւանդութեամբ մը եւ դատապարտուած էր անուաւոր աթոռով շրջելու իր ամբողջ կեանքին ընթացքին, Հրաչ Օկալիի դիմած է վիրաբուժական 14 գործողութիւններու ենթարկուելէ ետք: Ան արդէն իր առաջին քայլերը նետած է: Օկալի վստահեցուցած է զայն, թէ պիտի կարենայ առանց օգնութեան քալել մինչեւ Նոր տարի:

### «ԵՍ ԿԵՂԾ ՉԵՄ»

Օկալի կը յայտարարէ, թէ մտային դարմանումով, շնչառական մարզանքներով եւ ֆիզիքական վարժութիւններով յաջողած է Կեմմայի «մարմինը վերստին կապել ուղեղին» եւ անոր ուղեղին սորվեցուցած է «շարժումի տարբեր ճամբաներ» օգտագործել:

Օկալիի համաձայն, դարմանումի իր միջոցները կ'օգնեն մտքին՝ վերագտնելու շարժումի յիշողութիւնը: «Աւանդական բժշկութիւնը մարմինը եւ միտքը կ'անջատէ իրարմէ,- կ'ըսէ ան:- Սակայն հարկ է սորվիլ զանոնք վերստին իրարու կապելու ձեւը»:

Օկալի կ'ըսէ, թէ կրնայ բժշկել ոեւէ մէկը, որ կը հետեւի դարմանումի իր միջոցներուն:

«Ինչ որ կը կիրարկենք, կ'անցնի ուղեղէն. մարմինը կը գտնուի ուղեղին հակակշիռին տակ, եւ ասիկա հիմը կը կազմէ իմ աշխատանքիս: Սկեպտիկներ չեն հասկնար ասիկա: Ես կ'օգնեմ մահացու հիւանդութիւններէ տառապողներուն, սակայն, որովհետեւ բժշկագիտութիւն չեմ ուսած, աւանդութեան սպառնացող վտանգ մը կը նկատուիմ: Ինչ որ կը կիրարկեմ, կեղծ չէ: Այս մարդիկը յուսահատած էին, այժմ անոնք վերագտած են իրենց յոյսը:

Օկալի ծնած է Յորդանան եւ 1970ական տարիներուն փոխադրուած է Լոնտոն, ուր անոր կինը՝ Թրէյսի քաջալերած է, որ խորանայ իր նախասիրած գիտութեան մէջ: Ան յաջորդ 14 տարիները յատկացուցած է ուղեղին ուսումնասիրութեան, որուն վրայ հիմնած է դարմանումի իր միջոցները: Այժմ ան նոյն միջոցներով կը դարմանէ տարբեր հիւանդութիւններէ տառապող 20 անձեր:

«Ես կախարդ մը չեմ եւ պարզապէս մէկու մը հպելով չեմ բժշկեր զայն: Իմ կիրարկած միջոցներս կախեալ են հիւանդին կամքէն եւ ամիսներ շարունակ իմ ցուցմունքներուս հետեւելու պատրաստակամութենէն,- կ'ըսէ Օկալի:- Ինծի դիմողները պէտք է մղիչ ուժ մը ունենան, սիրեն կեանքը, փափաքը ունենան փոփոխութիւն մը իրականացնելու եւ յանձնուած չըլլան իրենց տառապանքին: Մտքին եւ մարմնին ուժը կը բխի բնութենէն, եւ ես կապի մէջ եմ բնութեան հետ: Սակայն խորհրդապաշտ մը չեմ եւ չեմ հաւատար, որ պէտք է լեռներուն վրայ առանձնանալ ինքզինք յայտնաբերելու համար: կը հաւատամ բնութեան տրամաբանութեան»:



Կեմմա Քուին. «Ինծի ըսուած էր, թէ անուաւոր աթոռէս երբեք պիտի չբաժնուէի: Սակայն որոշած եմ կատարելապէս բուժուիլ»:

«Կ'ուզեմ, որ մարդիկ ճանչնան գործս եւ բաց միտքով ընդունին զայն,- կ'աւելցնէ ան:- Շատեր յուսահատ են: Նիւթական յաւելեալ աղբիւրներու կարիքը ունիմ աւելի մեծ թիւով մարդոց դարմանումի միջոցներ ընձեռելու համար»:

Թէեւ Կեմմայի դարմանումը ոչ գիտական եւ անհաւանական կը նկատուի քննադատներու կողմէ, սակայն իրականութիւն է, որ անոր ոտքերը կը շարժին:

«Այժմ մեր տրամադրութեան տակ ունինք դարմանումի այս միջոցը, եւ մարդիկ պէտք չունին սպասելու գիտական անկիւնադարձային յայտնագործութեան մը», կ'ըսէ Կեմմա:

(ՀԱՄԱԴՐԱԲԱՐ)

# ԻՐԱՒԱԳԷՏՆԵՐ Կ'ԱՐՁԱԿԵՆ ՎՃԻՌԸ

**ՆԱՓՈԼԻԻ ՄԷՋ ԻՏԱԼԱՑԻՔ ԴԱՏԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ՄԸ ՄԷՋ ԿԸ ՎՃՌԵՆ, ԹԷ ԻՐԵՆՑ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՅ ՍՈՒՐՃԸ ՕԳՏԱԿԱՐ Է: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ԳՐԷ.**

Ամէն ոք գիտէ, թէ իտալացիք շատ կը սիրեն սուրճը: Անոնք օրական 70 միլիոն էսփրեսսօ կը սպառեն հաւաքաբար:

Օրը տան կամ մօտակայ սրճարանի մը մէջ գաւաթ մը սուրճով սկսիլը անխախտելի մէկ մասը կը կազմէ իտալացիներուն առօրեային:

Այսուհանդերձ շփոթութիւն կը տիրէ սուրճին բարերար կամ վնասակար ազդեցութիւններուն շուրջ:

Սուրճին ազդեցութիւններուն վերաբերող բազմաթիւ ուսումնասիրութիւններ տարբեր եզրակացութիւններու յանգած են: Ոմանք կ'ըսեն, թէ անիկա մարմինը կը պաշտպանէ որոշ հիւանդութիւններու դէմ, ուրիշներ կ'ըսեն, թէ անձկութիւն, անքնութիւն եւ ամլութիւն կը պատճառէ:

Սակայն իտալացիներուն համար հաճոյք մը ըլլալու կողքին, սուրճ խմելը գործէն պահ մը դադար առնելու, մէկտեղուելու եւ զրուցելու առիթ մըն է:

Վերջերս Նափոլիի համալսարանին դեղագործութեան բաժանմունքը երկրին ազգային խմիչքը յանձնեց դատական ատեանի մը վճիռին:

Ամէնէն աւելի իր սուրճով հռչակաւոր իտալական այս քաղաքին մէջ 12 վկաներ հրաւիրուեցան դատական ատեան, ուր սուրճը «դատուեցաւ» իտալական տարբեր համալսարաններէ եկած իրաւագէտներու կողմէ:

«Կը նախընտրենք սուրճը, որովհետեւ անիկա կը ներկայացնէ այս շրջանը, Նէափոլիթան շրջանը, ուր սուրճը պաշտամունքի առարկայ է,- կ'ըսէ համալսարանին դեղագործութեան բաժանմունքին պատասխանատուն:- Ամէն ոք ամէն ժամու սուրճ կը խմէ օրուան ընթացքին»:

### ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուրճին թիրախը ջիղերն են եւ անիկա ընդհանրապէս կը վնասէ մեր առողջութեան: Անիկա խանգարիչ ազդեցութիւն կը գործէ աշխատավայրին մէջ, առիթ տալով, որ մարդիկ դադար առնեն քաֆէին սպառելու համար: Իրլանտական սուրճին մէջ շաքարի եւ ալքոլի խառնուրդը յաւելեալ ազդեցութիւն կը գործէ սուրճին ներգործութեամբ:

### ԴԱՏԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ

Սուրճը կը պատճառէ անձկութիւն, ջղագրգռութիւն եւ դող: Անիկա նաեւ գլխացաւ կը պատճառէ անոնց, որոնք կը տառապին քաֆէինի գերզգայնութենէ: Սուրճը կը խանգարէ մարդոց քունը, եւ անոնք կը ստիպուին յաւելյալ քաֆէին սպառել օրուան մէջ իրենց աշխուժութիւնը վերագտնելու համար: Ծխելու նման, անիկա կը խանգարէ աշխատանքային օրը, որովհետեւ պատճառաբանութիւն մըն է գրասենեակէն դուրս գալու եւ դադար առնելու:

### ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ

Շատերուն համար սուրճին գլխաւոր արժանիքը քաֆէինին աշխուժացնող ներգործութիւնն է ջղային դրութեան վրայ, ինչ որ աւելի արթուն եւ զգօն կը դարձնէ մարդիկը: Անիկա նաեւ բարերար ազդեցութիւն կը գործէ մարմինը պաշտպանելով քաղցկեղի որոշ տեսակներու դէմ, ինչպէս նաեւ՝ ջիղերու փճացումով յատկանշուած կարգ մը հիւանդութիւններու, օրինակ՝ Փարքինսըն'զի, ուղեղին մէջ աւելցնելով տոփամինի համեմատութիւնները: Փաւիայի համալսարանէն դեղաշինութեան մասնագէտ մը կը քաջալերէ սուրճի չափաւոր սպառումը եւ կ'ըսէ, թէ օրական երեք գաւաթ սուրճը կրնայ մարմինը պաշտպանել վիզի քաղցկեղի եւ լեարդի անդամալուծութեան դէմ:

### ԸՆԿԵՐԱՅԻՆ ԲԱՐԻՔՆԵՐ

Դատական ատեանը յարմար նկատած է, որ մարդիկ իրենց օրը սկսին գաւաթ մը սուրճով: Դատավարութեան ընթացքին յաճախ նշուած է, թէ սուրճը կրնայ յիշուած բոլոր ժխտական ազդեցութիւնները գործել միայն չափազանցութեան պարագային: Սակայն սուրճի գործածութիւնը պաշտպանողները վիճած են, թէ ցարդ միայն երեք հոգի մահացած է սուրճի չափազանց գործածութեան պատճառով:

Այլ մասնագէտներ խօսած են սուրճին պատմութեան, անոր առնչուող աւանդութիւններուն եւ արտադրութեան մասին:

Իտալիոյ խոհանոցի ակադեմիայէն մասնագէտ մը կանչուած է բացատրելու համար քափուչինոյին բարիքները: «Իտալացիներուն համար անիկա, իր վերաշխուժացնելու յատկութեամբ հաճոյք պարգեւելու կողքին, մէկտեղուելու առիթ մը կը ստեղծէ եւ աշխատանքի պահուն քանի մը վայրկեան ազատ ժամանակ կ'ընձեռէ», ըսած է ան:

### ՎՃԻՌԸ

Սուրճը անպարտ հռչակուեցաւ առանց բուռն բանավէճի, եւ անոր դէմ բոլոր ամբաստանութիւնները յետս կոչուեցան այն տրամաբանութեամբ, թէ բոլոր մոլութիւններուն նման անիկա կը վնասէ միայն, երբ մարդիկ մեծ քանակութեամբ կը սպառեն զայն: Դատախազը բացատրեց, թէ սուրճը «փրկուած» է շնորհիւ ուղեղը խթանելու, յոգնութիւնը կանխելու եւ մարդիկը աւելի արդիւնաբեր դարձնելու իր յատկութիւններուն: Իրաւագէտներ վճռած են, թէ սուրճին այս դրական ազդեցութիւնը շատ աւելի զօրաւոր է, քան՝ աշխատանքային օրուան մը ընթացքը խանգարող անոր ժխտական դերը:



**Իտալիոյ տարածքին վերջերս ելեկտրական հոսանքի ընդհատումը չարգիլեց, որ իտալացիք սուրճ շինեն ու խմեն:**

Հետեւաբար աշխարհի տարածքին սուրճի սիրահարներ կրնան շարունակել ամէն առաւօտ էսփրէսսօ մը խմելու իրենց սովորութիւնը Իտալիոյ սուրճի մայրաքաղաքին մէջ կայացած դատական այս իւրայատուկ ատեանին ամբողջական օրհնութեամբ:

Պատրաստեց
Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ




«Ազդակ»ի «Անահիտ» ամսաթերթը Նոյեմբերէն սկսեալ յաջորդական թիւերով հարցազրոյցներ պիտի ունենայ մասնագէտ բժիշկներու հետ: Առիթ պիտի տրուի նաեւ մեր ընթերցողներուն՝ ուղղելու իրենց հարցումները: Ձեր հարցումները կրնաք ուղղել անձամբ կապուելով «Ազդակ» կամ զանոնք ղրկելով ֆաքսի կամ Ե-նամակի ճամբով: «Ազդակ»ի հեռաձայնի թիւերն են 01-258526 եւ 01-260115, ֆաքս՝ 01- 258529, իսկ Ե-նամակի հասցէն՝

anahidmonthly@hotmail.com

Նոյեմբեր ամսուան հարցազրոյցը պիտի ըլլայ ընդհանուր մարմնի մասնագէտ տոքթ. Յակոբ Մելքեանի հետ:

Կը սպասենք ձեր հարցումներուն:

